

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարի վերանորոգութեան հարիւրամեակը

Այս տարի սեպտեմբերի 13-ին լրացաւ Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարի վերանորոգութեան հարիւրամեակը. վերանորոգութիւնը տեղի ունեցաւ 1808 թուի սեպտեմբերի 30-ին եղած հրդեհից յետոյ։ Այս հրդեհը որ ծագել էր տաճարի հայերին պատկանող մասում, մեծ աւերմունք գործեց։ Չուր անցան յոյների, հայերի և լատինների ջանքերը, որ հրդեհը չանցնի տաճարի միւս մասերը, կրակը հասաւ կենդրոնական գմբէթին, որը և փուլ եկաւ հրդեհի ժամանակ. հրդեհը շարունակուեց երկու օր։ Հրդեհից զերծ մնացին մի քանի տեղերը։ Յոյները վերանորոգեցին տաճարը և վերանորոգութեան նաւակառութիւնը կատարուեց 1810 թուի սեպտեմբերի 13-ին։ Այս հրդեհի վերանորոգութեան հետեանքով ծագեց իրաւասութեան խնդիր։ Յոյները յուսադրելով լատիններին աշխատում էին հայերին հրձիգ դուրս բերել և Յարութեան տաճարում միակ իրաւատէր հանդիսանալ միայնակ վերանորոգելով տաճարը. մի յոյն ճարտարապետ յանձն առնելով ձրի կատարել տաճարի վերանորոգութիւնը, գնաց Երուսաղէմ, բայց Ազնաւուրեան Կարապետ ամիրան իմանալով այս յայտնում է արքունի շինութիւնների վերատեսչին, որ Յարութեան տաճարը իրաւունք չունեն յոյները միայն վերանորոգել, որովհետեւ տաճարը պատկանում է յոյներին, հայերին և լատիններին միանգամայն։ Թուրք մեծամեծները յոյներից կաշառուած, նրանց կողմն էին պահում։

500 հայ հոգևորականներ Սուլթան Մահմուտ Բ.-ին աղերսագիր մատուցին։ Սուլթանի հրամանով Փաշա-Գաբուսի կոչուած տեղում ատեան կազմուեց քննելու հայոց աղերսագիրը։ Հայերի կողմից ներկայացուցիչ էին ընտրուած Ազնաւուրեան Կարապետ ամիրան, Յարութեան Յովհաննէս

Ձէլէպին, Ձէրքէղեան Գրիգոր, Տատ վառօդապետ, Գլճեան Անտօն, Թնկրեան Մինաս, և Երուսաղէմի փոխանորդ Պօղոս վարդապետ, Յունաց կողմից ևս ներկայ են լինում երեք եպիսկոպոս և երկու աշխարհական։

Ատեանը ունեցաւ չորս նիստ օգոստոսի 2-ին, 5-ին, 9-ին և 12-ին, հայ ներկայացուցիչները վաւերագրերը չունէին ձեռին. դատարանի եզրակացութիւնը հայոց համար նպատաւոր չէր. տաճարի վերանորոգութիւնը յատկացուեց յոյներին, որոնք համարուեցին իրաւատէր իսկ հայերը՝ հիւր։ Դատարանի այս որոշումը օգոստոսի 16-ին յայտնուեց հայ և յոյն ներկայացուցիչներին։ Հայերը առ ժամն լռեցին. ատեանի որոշումն մատուցուեց սուլթանին, որը այդ որոշման համեմատ երկու հրովարտակ տուեց մէկը հայերին, միւսը յոյներին։

Հայերի նոր ազերսագրի համեմատ Սուլթան—Մահմուտը հրամայեց արքունի դիւանում որոնել հայոց վերաբերեալ թղթերը։ Գործը յանձնուեց 40 մարդու, դրանց հետ էր տիրացու Առաքելը։ Պալատի դիւանատանը գտան Երուսաղէմն առնող Սուլթան—Սէլիմ առաջինի հրովարտակի արձանագրութիւնը, ուր նշանակուած էին հայոց վանքերը անուն անուն, այն տեղ կար և Մար Անդրէասի վանք, որ այժմ մէջ տեղում չկար։ Աթ-Մէյդանի գանձարանում գտան Սուլթան—Մահմուտ առաջինի՝ 1152-ին Հիջրէթի, Գրիգոր շղթայակրին տուած հրովարտակի արձանագրութիւնը։ Արձանագրութիւնը համեմատելով հրովարտակի հետ, քննիչները ներկայացրին Սուլթանին, որ հրամայեց նոր ատեան կազմել և նորից քննել գործը։ Ատեանի նիստերը տեղի ունեցան 1810 թ. ապրիլի 7-ին, 11-ին 14-ին և մայիսի 19-ին։ Ատեանի որոշումը Սուլթանը իւր հրովարտակով յանձնեց դիւանապետին, որ յայտնի հայերին և յոյներին։ Սուլթանը իւր հրովարտակի մէջ պատուիրում էր, եթէ կողմերը ընդունեն Սուլթան—Սէլիմի հրովարտակի իսկութիւնը, ինքն ևս ընդունում է, թող ըստ այնմ և առաջին օրէնքների և կարգերի համեմատ իրաւախօհ լինեն թէ իրանց սեփական և թէ ընկերովի տեղերի վերա-

բերութեամբ: Եւ հետեակ երեք ազգերը ում և կամենան, հետեին. այս բանը ստուգուի Երուսաղէմում: Սակայն սուլթանը տաճարի վերանորոգութեան գործը թողնում է յոյներին. ոչ որպէս սեփականատէրերի, այլ որպէս իւր հրամանը կատարողներէ: Որովհետեւ, ասում է սուլթանը, «Իմ համար ինչպէս հայերն են, նոյնպէս և յոյներն են. նրանց մէջ իմ աչքում տարբերութիւն չկայ, եթէ չընդունեն Սուլթան—Սէլիմի հրովարտակի խկութիւնը, այն ժամանակ ես, որպէս երկրի տէր, կըտնօրինեմ՝ ինչպէս կըկամենամ»: Հայերը ուրախութեամբ բացագանչեցին «ազգովին հնազանդ ենք մեծազօր արքայի բարձր հրամանին, թող լինի այնպէս, ինչպէս հրամայել է»: Յոյները լուռ մնացին: Հայերը հրաման ստացան տաճարի իրանց մասում եղած յոյների վերանորոգութիւնները քանդել, և, որպէս չհամապատասխանող նախկին շինուածքին, նորից վերաշինել:

Սակայն հրովարտակի վիճող կողմերին յայտնելը ուշացաւ 8 ամիս 13 օր: Հայերը կասկածելով որ և է խարդաւանքից սկսեցին յուսահատուել, արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրան յուսադրում էր, թէ սուլթանը անդրդուելի է իւր որոշման մէջ, և հրովարտակը դուրս եկաւ 1811 թ. փետրուարի 13: Հայերը շատ ուրախացան. հրովարտակի հայ թարգմանութիւնն է:*)

«Հիմն եղեալ զհրովարտակս նախնւոյն իմոյ Սէլիմայ արքայի, որ տիրեաց Պաղեստինոյ, և ըստ մտաց նոցին հրամայեցի տալ հրովարտակ հայոց և յունաց, զի որպէս տիրէին յառաջագոյն տեղեաց և կատարէին զուխտս, նոյնպէս արասցեն և աժմ՝ չնեղելով զիրեարս, զի զերկուսին ազգս հաւասար ճանաչեմ. զի թէպէտ և յոյնք հրամանաւ իմով շինեցին զտաճարն, այլ զբաժին ծախուց տեղեացն հայոց հատուցեն նոքա յունաց. զկէս ծախուց բաժանօրդ տեղեաց և զըովանդակ ծախսն սեպհական

*) Ժամանակագիր. պատմ. Ս. Երուսաղէմի. բաժանեալ յերկուս հատոր. աշխատ. Աստուածատուր Եպիսկոպոսի Տ. Յովհաննիսեան 1890 թ. հատ. Բ. եր. 214:

տեղեաց, և հաստատեսցի այս օրինօք դատարանի, մի յետոյ հակառակեսցին ընդ միմիանս. զի յայտնի լինի թէ յոյնքն միայն շինելոյ ունին հրաման, և ոչ բոլորին տիրելոյ և ամենայն հրովարտակք զորս առեալ են երկոքին ազգքն, ամենեքեան անվաւեր և խափանեալ համարեսցին և միայն յարգեսցին հրովարտակք Սէլիմայ, տուեալ ի թուին Հիջրէթի 923: Եւ նոր հրովարտակքն, զորս հանդերձեալ եմք տալ երկոցունց, արձանագրեսցին յամենայն դիւանս և մի օրինակն պահեսցի ի գանձն արքայիս:

Հրովարտակների կայսերական կնքով վաւերացումն տեղի ունեցաւ 1812 թ. դեկտեմբերի 13-ին և յանձնուեց հայերին և յոյներին յունվարի 13-ին. որքան հայք ուրախ էին այնքան էլ յոյները, որ միայնակ կամենում էին իրաւատէր լինել Երուսաղեմում, տրտում:

Սակայն հրովարտակով խնդիրը չլերջացաւ. վէճ, կռիւ, հակառակութիւն յոյների և հայերի միջև և ձգձգումնք թուրք պաշտօնեաների կողմից երկար տարիներ շարունակուեցին, և երկուստեք մեծամեծ ծախքեր եղան, թէ և կայսերական հրովարտակի մէջ հիմք առնելով Մէլիք Սալահատտինի և Սուլթան Սուլէյման առաջինի հրովարտակները, իւրաքանչիւր ազգի սեպհականութիւն անուն անուն յիշուած է:

Յ. Ա. Ե.

ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱՒԵՐՈՒՄԸ

ԺԲ.

Հափմեանի և Բասումեանի սպանութիւնը. Ալլահեար Բեգը և Գրիգոր Բահանան. Վերջինիս համակը. Ալլահեար Բեգի նամակը. Բաղայի վնասների հաշուեցուցակը: Տխուր հաճդես:

Վերը յիշատակուեց, որ Բադայի լիախօտական հայերի մի մասի համար ստեղծուեց էլի մի ընտանիքային Քէշիշքեանդ գիւղում Ալլահեար Բէգ Զիւլֆադարովի հովանաւորութեան տակ: Այդտեղ հաւաքուեցին մինչև 60 հոգի երկսեռ հայեր: Նրանց պարագլուխն էր Գրիգոր քահանայ Տէր Աբրահամեանց, որի